Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1336

2 կ. | ԿՈՄՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԱՍՍ· ԳՐԱԿ· ՍԵՐԻԱ | № 1

Ի՞ՆՉ Է ՏԱԼԻՍ ԿՈՄՊԵՐԱՑԻԱՆ ՀՔԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ

Հրատարակություն Հայկոոպի

Երևան 1929

334

Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՉՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԶՐԱՑՆԵԼ ԻՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան Հեղափոխությունն ազատեց գյուղի չքավորությանը կալվածատերերի և ցարերի ճնշումից: Սովետային իշխանությունն ամեն կերպ ոժանդակում է չքավորությանը նրա տնտեսությունը բարձրացնելու գործում: Չքավորներն ազատված են գյուղատնտեսական հարկից. նրանց առաջին հերթին և արտոնյալ պայմաններով պետական վարկ է բաց թողնվում:

Բայց հեղափոխական բոլոր նվաճումները և պետության կողմից չքավորության ցույց տրվող ոգնությունն ամբողջապես և լրիվ կերպով կոգտագործվեն միայն այն պայմանով, յերբ չքավորությունը կլնի լավ կազմակերպված, յերբ նա աշխույժ մասնակցություն կբերի բոլոր խորհրդային, կոոպերատիվ և այլ հասարակական կազմակերպությունների մեջ:

Կուլակը հալածված է հեղափոխության կողմից, բայց նա չի վոչնչացված: Նա համառ կերպով պայքարում է իր գոյության համար և ոգտագործում ամեն մի առիթ՝ խորհուրդների և կոոպերացիայի մեջ խցկվելու համար:

Կուլակի այս խցկման դեմ չքավորությունը հանդես պետք է բերի իր կազմակերպվածությունը և իր շաղկապվածությունը միջակ գյուղացիության հետ: Բանվորների հետ սերտ դաշինք կապած՝ չքավոր և միջակ գյուղացիության միահամուռ ջանքերով միայն կարող է կառուցվել սոցիալիստական տնտեսությունը:

ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

Ի՞ՆՉ Է ՏԱԼԻՍ ՉՓԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԸ

Նախորդ 1928–29 տնտեսական տարում Գյուղական Սպառողական Միությունները յերեք և կես միլիարդ ռուբլու ապրանք են ծախել: Կոոպերատիվների ապրանքների գները քան–քանհինգ տոկոսով ավելի էժան են յեղել, քան մասնավոր առևտրականների մոտ: Դա նշանակում է, որ կոոպերատիվից գնած ապրանքում գյուղացին խնայել է յուրաքանչյուր ռուբլուց 20–25 կոպեկ:

Ո՞վ է ավելի շահագրգռված խնայելու իր կոպեկներն ապ, նավթ, ծխախոտ, կաշի, մանուֆակտուրա և անձնական սպառման այլ տիպի ապրանքներ գնելիս — ունևո՞ր գյուղացին, թե՞ չքավորը: Ի հարկե՛, չքավորը: Ունևոր գյուղացին անձնական սպառման առարկաների վրա մսխում է իր ծախսելիք յուրաքանչյուր տասը ռուբլուց յերեք ռուբլի միայն. մնացած 7 ռ. նա գնում է իր տնտեսության համար կալենոր ապրանքներ, մեքենաներ, պարարտանյութ և այլն: Իսկ չքավոր գյուղացին իր ծախսելիք յուրաքանչյուր 10 ռուբլուց 9–ը տալիս է անձնական սպառման ապրանքների: Դրա համար էլ նա առանձնապես շահագրգռված է, որ այդ ապրանքների գները ինչքան կարելի յե էժան լինեն. իսկ ամենից ավելի էժան նա կարող է գնել միայն Սպառողական Միություններից:

ԻՆՉՈ՞Ւ ՉՓԱՎՈՐՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ ԱՆԴԱՄ ԼԻՆԵՆ

Կոոպերատիվն այն ժամանակ միայն ուժեղ կլինի, յերբ նրա անդամները կոոպերատիվ աշխատանքի խ-

կական տերերն են հանդիսանում, յերբ նրանց մուծած գումարները կազմում է կոոպերատիվի շրջանառու կապիտալը և յերբ իրենք գործոն մասնակցություն են բերում նրա կառավարման գործում:

Բերքի չքավորները հետու յեն մնում կոոպերատիվից, ապա տնտեսական հեշտությամբ կարող են ուժ ձեռք բերել կուլակները և նրանց կոմսոմոլիցները, ինչպես դա լինում է վարչ կոոպերատիվներում: Այդպիսի դեպքում չքավորները կոոպերատիվից օգուտներ չեն ունենալ: Կուլակը չքավորի անհաշտ թշնամին է և վարանով էլ նա տիրություն անելու լինի,—իր տնտեսության կամ հատարակական տնտեսության մեջ,—նա միայն այն մասին կմտածի, թե ի՞նչպես հուպ տա չքավորին: Սրա համար էլ չքավորները պետք է հատատ քայլերով դնան դեպի կոոպերատիվը և մյուսների հետ միացած տնտեսվեն քշեն կուլակներին և բոլոր նրանց, ովքեր հատարակական աշխատանքներում կուլակային գիծ կտանեն:

Կոոպ. կենսունակության լիազորների վերջին 41-րդ լիազորական ժողովը որոշել է—մինչև 1930 թվի հոկտեմբերի 1-ը Սպառողական Միությունների ցանցում գրավել չքավորական բոլոր տնտեսությունները: Այդ-ին ներկայումս էլ կան օրինակներ, որտեղ չքավորական յուրաքանչյուր հարյուր տնտեսությունից 80-90 տնտեսություն մասնակցում է սպառողական կոոպերացիային: Բայց կան օրինակներ էլ, որտեղ չքավորությունը դեռ շատ վատ է կոոպերացված. այդ տեղերում, ի հարկե, նրա կարիքները ևս ավելի վատ են սպառողական կոոպերացիայի կողմից:

Շատ դեպքերում չքավորները կոոպերատիվին չեն

կարողանում անդամագրվել նրա համար, վոր դժվարանում են փայավճարը մուծել: Բայց այս արդելքը հեշտ է վերացնել, քանի վոր չքավորների համար կոոպերատիվներն այդ ուղղությամբ արտոնություններ են տալիս:

ՉՔԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՈՊԵՐԱՑՄԱՆ ՖՈՆԴԵՐԸ

Համաձայն Սպառողական Միության կանոնադրության, Կոոպերատիվին անդամագրվողներին փայավճարը մուծելու համար տրվում է վորոշ յերկարատև ժամկետ, բայց անդամագրվողը փայատերի բոլոր իրավունքները ձեռք է բերում մուտքի վճարը տալուց անմիջապես հետո: Իսկ Կոոպերատիվին անդամագրվող չքավորների համար վոչ միայն յերկարացվում է փայավճար մուծելու ժամկետը, այլև չքավորության կոոպերացման հատուկ ֆոնդերից նրանց բաց է թողնվում գումարներ, կոոպերատիվին անդամագրվելու համար:

Չքավորության կոոպերացման ֆոնդ պետք է ունենա յուրաքանչյուր Գյուղական Սպառողական Միություն: Նա կազմվում է մաքուր ոգուտի հատկացումներից: Նախորդ 1928–29 տարվա ոգուտից յուրաքանչյուր գյուղական Սպառողական Կոոպերատիվ չքավորական ֆոնդին պետք է հատկացնի վոչ պակաս քան ամեն մի ռուբլուն 15 կոպեկ (զուտ ոգուտի 15 տոկոսը): Այդպես է հաստատել ԽՍՀՄ ԺողԿոմխորհը 1928 թ. սեպտեմբեր 7-ի վորոշմամբ:

ԽՍՀ Միության բոլոր գյուղական Սպառողական Միությունների չքավորության կոոպերացման ֆոնդերը խոշոր գումարներ են կազմում—1928 թ. հոկտեմբերի 1-ին դա տասը միլիոն ռուբլուց ավելի յեր:

Այս ֆոնդերից տրվող դումարներով անցյալ տարվա ընթացքում կոոպերացման յենթարկվեց մոտ յերեք միլիոն չքավոր գյուղացի: Ֆոնդի դումարները բաց են թողնվում ամենաբարձր կանոնադրությամբ ընդունված փայի կեսի չափով և 3—5 տարի պայմանաժամով: Այս դումարների համար վոչ մի տոկոս չի պահանջվում:

ՏԱՐԲԵՐ ՉԱՓԻ ՓԱՅԵՐ ՉՔԱՎՈՐՆԵՐԻ, ՄԻՋԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՈՒՆԵՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սոցիալական Միությունները իրենց անդամներից փայ են վերցնում, վորպեսզի նրանից չքվանաստ միջոցներ կազմեն և փայատերերի համար անհրաժեշտ ապրանքներ գնեն: Բայց բոլոր փայատերերը միատեսակ գնումներ չեն կատարում. չքավորը քիչ և գնում, միջակը՝ ավելի շատ, ունևորը՝ էլ ավելի շատ (չհաշված դեֆիցիտային ապրանքները): Դրա համար էլ փայերը չպետք է վոր միատեսակ լինեն,—ով ավելի յե գնում, նա պետք է ավելի շատ փայավճար մուծի:

Մինչև վերջին ժամանակները այնպիսի տարբերություն գոյություն չուներ: Փայը մեծ չեր. մինչև 1927 թվի հոկտեմբերի 1-ը նա միջին հաշվով 3 ռ. 62 կ. եր: 1927–29 տնտ. տարում նա բարձրացավ մինչև 7 ռ. 42 կ., 1928–29 թվին մինչև 10 ռ. 50 կ., իսկ հետագայում էլ ավելի պետք է բարձրանա:

Յեթե 3 ռուբլու փայավճարի ժամանակ կարելի յեր հաշվել միատեսակ փայերի սիստեմի հետ, ապա ներկայումս դա արդեն ընդունելի լինել չի կարող: Առաջիկա յերեք տարիների համար փայավճարը պետք է սահմանել, որինակի համար, հետևյալ կերպ՝

չքավորների համար՝ 10 *ռուբլի, միջակներին՝* 25 *ռուբլի, ունևորներին՝* 40 *ռուբլի:*

Այսպիսի տարբեր, կամ, ինչպես ասում են, շերտավորման յենթարկված փայ մուծելով՝ չքավորները Սպառողական Միության անդամագրվելիս մեկ տարվա ևս կունենան:

ՉՔԱՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԺՈՂՈՎՆԵՐ

Կոոպերատիվի բոլոր կարևոր հարցերը վճռվում են նրա անդամների ընդհանուր ժողովում, *կամ* անդամների ընդհանուր ժողովներում ընտրված լիազորների ժողովում: *Այս ժողովներում և, վոր փայատերչքավորները պետք և պաշտպանեն և անցկացնեն այն վորոշումները, վորոնք ողտակար են չքավորության, և Կոոպերատիվի Վարչության, Վերստուգիչ Հանձնաժողովի և Խանութային Հանձնաժողովի մեջ ընտրեն այնպիսի թեկնածուների, վորոնք պաշտպանում են չքավորների շահերը:*

Իսկ վորպեսզի չքավորները փայատերերի ընդհանուր և լիազորական ժողովներում կարողանան դուրս գալ ավելի միակուռ և նախապատրաստված, դրա համար Կոոպերատիվի բոլոր փայատերերի ընդհանուր ժողովից առաջ պետք է հրավիրել չքավորական առանձին ժողովներ: *Չքավորական այս ժողովներին պետք և աշխատել մասնակից դարձնել ինչքան կարելի յե մեծ քանակությամբ նաև վոչ-փայատեր չքավորների: Այդպիսիներին անհրաժեշտ է բացատրել, թե ինչպիսի մեծ նշանակություն ունի նրանց համար Սպառողական Կոոպերացիան, և ինչպիսի արտոնություններ են տրվում չքավորներին Սպառողական Միության անդամագրվելիս:*

Յերբ չքավորական ժողովներին կգան նաև միջակները, դա յերբեք էլ վատ չի լինի: Միջակները չքավորներին թշնամի չեն. ընդհակառակը, միայն միջակի հետ դաշինք կապելով է, վոր չքավորները կկարողանան հաջողությամբ պայքարել կուլակների յերկրների դեմ: *Ուստի, յեթե միջակները կգան չքավորական ժողովներին, ապա նրանց պետք է հնարավորություն տալ մասնակցելու:*

Չքավորական խմբակները.—*Սպառողական կոոպերատիվի վարչություններին կից կազմակերպվում են չքավորական խմբակներ, վորոնք Կոոպերատիվի ամենորյա աշխատանքի մեջ չքավորության շահերից բղխող գիծ են անցկացնում և հսկում են, վոր անբավարար քանակությամբ ապրանքների բաշխման ժամանակ չքավորները առաջին հերթին, փայի վճարման համար նրանց արտոնություններ տրվեն և այլն: Այս խմբակները կազմվում են բոլոր այն թե՛ կուսակցական և թե՛ անկուսակցական չքավորներից*, վորոնք ընտրված են Կոոպերատիվի որգաններում, *այն է՝ Վարչության ու Վերահսկիչ Հանձնաժողովի անդամներից և Կոոպերատիվի լիազորներից:*

ԿՈՒՌ ՇԱՐՔԵՐՈՎ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

Գյուղական չքավորությունը կուլակների բանությունից վերջնականապես և ընդմիշտ ազատագրվել կկարողանա միայն սոցիալիստական հասարակարգում:

Կոոպերացիայի բոլոր ձևերի—կոլտնտեսությունների, գյուղատնտեսական արտելների, սպառողական միությունների միջոցով մեկնք կհասնենք սոցիալիզմին:

Սպառողական կոոպերացիայի հետագա աշխատանքները—չքավորությանը պետք է ապահովեն նրանց հա-

մար ինչքան կարելի յե մեծ ազդեցություն բոլոր հարցերի վճռման և գյուղական սպառողական միությունների վարչական և ստուգիչ որդանների մեջ մտնելու գործում։

Միջակի հետ ամուր դաշինք կապած՝ գրոհ կուլակի դեմ. խորհրդային կոոպերացիայի ամրացման համար։

Ամբողջ չքավորությունը դեպի չքավորական կոոպերատիվ ժողովներ։

Բոլոր չքավորները—սպառողական միությունների անդամները—դեպի *կոոպերատիվ գեկավար աշխատանքի։*

Վոչ մի ձայն կուլակներին և նրանց կողմնակիցներին։

Զքավորները լրիվ կերպով իրենց ձեռքը պետք և տանեն կոոպերատիվի գործերը։

Ա 4065

ՍՍՌ ԳԻՏ. ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԵՐԵՎԱՆ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038310

(092)

I
A 4065